

Տարեկան գինը 10 ռուբլի է տարվանը 6 ռուբլի: Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ:

(Օտարաքաղաքացիք գիտում են ուղղակի Դուֆուս. Բեդաույն „Մուսուս“)

ՄԵՆԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Կայի կիրակի և տօն օրերէն):

Հայտարարութիւն ընդունվում է ամեն շաբաթով:

Հայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԳՈՒԹԻՒՆ

Ուժ գիտնէր:—Ներքին տեսուչիւն: Մի հրահր: Նամակ երևանից: Նամակ խմբագրին: Ներքին լուրեր: Արտաքին տեսուչիւն: Յունաստան: Նամակ Թիֆլիսից: ՎՄշակիչ հեռագիրներ: Հայտարարութիւններ: Բանասիրական Աշխարհիկ լեզուի մասին:

ՈՒՄ ԴԻՄԵՆԲ

Լրագրական թղթակցութիւններով և մասնաւոր նամակներով վանից օգնութիւն են խնդրում այնտեղի սովատանջների համար: Կովկասի հայեր, ի՞նչ պէտք է պատասխանենք: Եթէ լռենք,— դուք մեզ կը դատապարտէք, եթէ ձեր կողմից բաց ասենք,— ձեզ կը վերաւորենք, եթէ խոստանանք,— սուտ կասենք... Ուրեմն ի՞նչ անենք:

Կովկասն էլ հացի է կարօտում, բայց վանցին գրան չէ նայում: Նա մեզ անիծում է մեր սառնութեան համար: Այդպէստանի բաղերում մի շաբաթ զուր թափառելով, նա արմատներից էլ չէ կշտանում, նա թուլանում է, նա վայր է ընկնում, բայց շունչը ար-

ձակելիս, դարձեալ նա մեղանից է օգնութիւն սպասում:

Ի՞նչ անենք կովկասեցի հայեր... Լռենք, ձեռք չը մեկնենք վանցուն. բայց ի՞նչ իրաւունքով, երբ նա ասում է. «Էյ սովից մեռնում եմ, բայց իմ կեանքը բո կեանքից թանգ է. ես մեռնում եմ այնտեղ, ուր մեռել են մեր նախնիքները, ես մեռնում եմ այն հողի վրա, որի սիրոյ համար ինձ դար շարունակ փշեց պսակ եմ կրել: Իմ գերեզմանն է այնտեղ, ուր ուղղված են հինգ միլիոն աչքեր... իսկ դու...»

Ի՞նչ անենք... լռենք և նրա թուրք կուլ տանք... Բայց ի՞նչ աչքով միմեանց երեսին նայենք: Ոչ, լռել չենք կարող. գուցէ և մեզ նոյնպէս անհնարին է և օգնել... Ապա, ի՞նչ անենք, ո՞ւմ դիմենք:

Դիմենք նախ այն մարդուն, որի վրա է դարձնում սովամահ հայր իր յետին հայեացքը, դիմենք նրան, որի աղօթքին է հաւատում յուսահատ ազգը իր մեղքը քաւելու և ապագան գտնելու

համար, դիմենք նրան, որի դէպիցն է կրօն, խօսքն է փրկութիւն: Թող փրկէ նա մեր յուսոյ կենտրոնը, ազգի բունը, վանքը: Թող փրկէ նա ոչ սեփական գրպանով, ոչ էլ սաղմոսով, այլ մի հատ կենդանի խօսքով:

Եւ այդ խօսքը սուրբ Գրիգորի տաճարից արձագանք կը գտնէ հաղարաւոր եկեղեցիներում, որոնք սփռված են հեռու հիւսիսից մինչև Արևմուտք:

Եւ այդպէս կը փրկվի վանք, երբ նրան ձեռք կը մեկնի Ալշմիսիսը, երբ նրան ձեռք կը մեկնի մեծ բազանայապետը...

Իսկ եթէ Ալշմիսիսը իր մի խօսքն էլ խնայեց, դիմենք այն ժամանակ մեր սրտին և նրանից գուժ պահանջենք:

Բայց եթէ մեր սիրտն էլ լռեց, — թող այն ժամանակ մեր բերանը այլ ևս չամաչէ ասել. «Թըքենք հայի անունին»:

Գր. Նիկողոսեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՀՐԱՒԻՐ

Մարդ, երբ մի հայացք է ձգում տաճարահայաց վիճակի վրա, խոյն հազար տակում ու սարսափ է զգում: Արդեօք այն արարածները մի՞թէ տանջանքի և չարաբանքի կամ մարդ են ստեղծվել որ, ինչ և իցէ տառապանք և անարգանք հէնց նրանց վերայով անցկենայ: Բաւական չէ այն հազար ու մէկ զոյն ներութիւնները որ ծանրաբեռնված կրում էին հրու հեղուկութեամբ,— յանկարծ դուրս հանեց դուրս անտանիկ պատիժ սովը՝ անելով զոհեր:

Եւ երաւ անհնար նրա ժանիքներին դիմադրել ոչ համբերութիւնով և ոչ ոյժով: Հիմայ եթէ շուտով չը փշրվի ժանիքը—կորչելու է հայրենիքը: Այլ ևս չէ մնացել սահման համբերելու, զարկել է ժամը գործելու (օգնելու): Թող ընդհանուր ազգայինը, մանաւանդ հարուստ և փարթամ թիֆլիսիցը, խաւար աչքով և սառ սրտով չը նային այս աշխարհաւեր տեսարանին: Բաւ է որչափ զեղիութեան գուարաններով, շաղկապութեան պատարագներով են զուարթացնում մարմինները: Թոյլ տան իրանց՝ մի կարծ միջոց հետեւի հոգեզուարթութեան: Ձէ երկար կեանքն սովի, ոչ աւել հինգ ամիս: Թողնեն զոնեա հինգ ամիսը զուարճութիւնը, կըլուրէր, թատրոնի և այլ ունայն նպատակներով վատնած զուարթները՝ նուիրեն սովալուկ-

թիւնը և այլն, այդ բոլորի մէջ ազգային ճաշակը պահանջում է մի յայտնի ուղղութիւն: Մի պարոն, մի յայտնի աստիճանի բանաստեղծ անդամ, իր վէպի մէջ գործ է ածում նուր ճաշակը և ակնաչը վերաւորող, կարելի է ասել, մի անհամ բառ. նա ստեղծում է մի բառ, որը պիտի նշանակէ ԵՄԵՐՔԱ և ինչ անուն է տալիս նրան... Ճշմարտախոս: Ուղիղ տախտակայ մի բառ, որը անհնազանդ ըզոր արհեստական կանոններով փայտից չիւսած մի անուկ է նմանում...

Թէպէտ և ստեղծողական հանձար չէ պահանջում օտար բառեր գործածելը, բայց բոլոր բառերին պատկանեալ ընդհանուր պայմանը—ազգային բնաստեղծութիւնը—պատեղ ևս իր իրաւունքը պիտի տարածէ: Այժմ մանաւանդ յաճախ գրում են Ֆորմա, պոլիտիկա, ասեղիզացիա և այլն օտար բառեր: Ընդունենք օտար բառեր, բայց Աւստոյ, խաթրին, վերցնենք այնպիսի բառեր, որոնք ձուռի հետ պատուաստվել կարողանան և կամ գոնէ հեռացնենք խոչնդանները: Ընթերցողներից շատերը գուցէ Արօպայի մեծ զարգանքներում չինացիներ տեսած լինեն, օտարոտի հազուատներով երկար, համարեա մինչ գետին կախված քաղով ծամբով: Բուրբեքեանք, գործերը թողած, դեռ նոցա վրա ապշած նայում են, իսկ շատերը նաև ծիծաղում: Մեր խեղճ հայ թէ վրացի ստեղծողները Ֆիլադելֆիա գնալու ժամանակ այդ արդէն փորձից գիտեն: Փոխեցէք նոցա բնիկ հազուատները, եւրօպացիէք նոցա—նոքա թատրոն անգամ կերթալին աւանց օտար ուշադրութիւնը իրանց վրա զբաւելու:

Երջը և մեղ օտար, եւրօպական հիւր բառերի հետ է պատահում: Հազար ասացէք Ֆորմա, ոչ մի հայ, իրեն հայ, բառի այդ ձևը գործ չի անի խոսակցութեան մէջ, եթէ նա չէ ուղում իր ունկնդիրներին ժպտալ շարժել: Ինչիցն է այդ, մի՞թէ հայը այդ բառի օտարութեան վրա է ծիծաղում. ամենևին. ինչպէս Ֆրանսիացին կամ գերմանացին չեն ծիծաղի չինացու վրա, որովհետ նա չինացի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵՁՈՒԻ ՄԱՍԻՆ

II

Մի միտք, որը վերին աստիճանի վնասակար է, այդ այն է, որ մեր գրական լեզուն իսկապէս աշխարհիկ չլինելու համար իբր թէ հարկաւոր է նորա բոլոր բառերը և վերջապետութիւնները և թէ դարձուածները աշխարհաբանացնելը, եթէ ինձ կը թոյլատրվի այսպիսի մի վայրենի բայ գործածել: Եւ այդ ձգտումը երևում է շատերի մօտ ոչ թէ միայն գրաբանի վերաբերեալ, այլ մինչև անգամ աշխարհաբանի մէջ գրութիւն ունեցող այս և այն ձև ու եղանակի դէմ: Աշխարհաբան չլինել à tout prix: Պիտի խոստովանվել, որ այդպիսիների նպատակը ամենաբարձր է որ կայ աշխարհը, որը դարձնում նոքա ցանկանում են հեշտացնել լեզուի սովորութիւնը: Ել ինչ երկար մտածելը, մտածում են նոքա, քամի, սեռաւոր քամու, ուրեմն եկեղեցի—եկեղեցու, ձի—ձիու. և կամ եկեղեցի—եկեղեցիներ, ինչու չէ ձի—ձիներ. և կամ խօսել—խօսեց, ուրեմն բերել—բերեց, տանել—տարեց, ասել—ասեց: Այնպէս որ բաւական է մի հայ, լինի նա դեռուք հայկաբան, նստի իր սենեակում և մի շարադրուց մէջ, դերձակի պէս, բոլոր միւս բայերն էլ մի կամ երկու-երեք օրինակներով վրա կարտէ և այդպիսով կը ստանանք լեզուի միութիւն: Միութիւն չը ստացանք, այլ միակերպութիւն, ճանձնարը միակերպութիւն... Մանաւանդ տիրապի է տեսնել նոյն շաղի վրա մի վիպասան,

որը իր նիւթերը ազգային կեանքից քաղելով, պիտի մտածէինք որ նաև լեզուի կողմից նա ներքին չված կը լինի նոյն ազգային հողով: Ահա ինչպէս է գրում մեր ակնաւոր վիպասաններից մէկը. «Նոքա կերան, խմեցին, երգեցին և ուրիշ շատ գծութիւններ արեցին»: Հայաստանի այդ որ անկիւնումն և որ գրականայէս կրթված հասարակութեան մէջ է լսել անհնար բոյի արեցին անձուհի անցեալը, այդ ևս չը գիտեմ. միայն թէ իմ կենթադրութիւնն է, որ գրողը ցանկալով միութիւն հաստատել, խմեցին, երգեցին բայերից յետ պատճառ չէ տեսել, թէ ինչու չը պիտի ասել նաև արեցին: Կրանի քերականներին, բոլոր գրողները նորա համար են մտածում, էլ ինչ հարկաւորութիւն կայ նորա կողմից լեզուի կանոնները ուսուցանալիս...

Չանձնարը միակերպութիւնը նախադասվում է ազգային հանձարի բազմաբան պահանջներից և դորան անուանում լեզուի սովորութիւնը...

Մի այլ ձգտում, այդ՝ դարձաբան վերջած մի քանի դարձուածների դէմ նկատելի հակադրութիւնն է: Խոստովանենք պարզ ի պարզով գրելը նոր ձեռքն առած գրողը մեր աշխարհիկ լեզուի մէջ անցած գրաբան դարձուածների և կամ բառերի դէմ է միշտ, որքան սովորական և մի և նոյն ժամանակ գեղեցիկ լինեն նոքա: Բայց նման, նապէս անհերքելի է, որ քանի նա աւելի վարժվում է, այդքան նա հաշտվում է իր վարժայ առածի հետ: Ընդունած այդ որպէս լրողութիւն, հարցնում ենք դորա պատճառը: Պատճառը պարզ է, որպէս արեգակ. քանի նա մեծանում է, դադար փարների հորիզոնը ընդարձակվում, ճաշակը նորանում, նոյնքան նա զգում է այն պակասութիւնը, որը կայ բուն աշխարհաբանի մէջ իր գաղափարները աւելի ճիշդ արտայայտելու համար: Բացի դորանից, նա չէ հասկանում թէ ինչու ի զուր տեղից մի աղաւմանը պատուհանից փողոցը պիտի վայր ձգէ, որովհետև դա նորան հորիցն է ժառանգած: Ով փոքր ինչ ճաշակաւոր մարդ է, նա իսկոյն կա-

րող է գնահատել գրաբան մի քանի խօսքերի և դարձուածների թէ ներքին ոյժը և թէ արտաքին փայլը: Մենք չը պիտի գործածենք նմանքան, ձեռնարկ, դուրսաբան, համափոխ, հանապարհ գուր, ըստ երևոյթիւն և հաղար ուրիշ այդպիսի թէ հարկաւոր, թէ գեղեցիկ և թէ ներդաշնակ բառեր, որովհետև նոքա գրաբանից են մեզ մօտ անցել: Այդ երկխաղութիւն է շատերի կողմից այնպէս, որպէս միամտութիւն նոցա կողմից, որոնք, ընդարձակ լեզուին հետեւելով, մտածում են հայկական կրօնը և ազգը պաշտպանել:

Մի կէտում, մանաւանդ գրողը կանչված է մեծ դեր խաղալ լեզուի մէջ. այդ նորա ստեղծողական դերն է, որով նա բառեր և դարձուածներ է ըստեղծում ու կամ եղածը գեղեցիկացնում: Ով մեծ գրողների գործածներ է կարգացել, նա նկատած կը լինի ի հարկէ, թէ ինչպէս մէկը, որը իր անձի մէջ մարմնացրել է ազգային հողին, նա դառնում է, կարծես, նոյն իսկ ազգը ինքը սորա ամբողջ հանձարը ոյժով: Եւ արդարև այդպիսի հեղինակի ստեղծած թէ բառերը և թէ դարձուածները, թէ պէտ բարբոսի նոր, դեռ չը լուսած, ամեն ընթացիկ թիֆլիսում են հարազատ և դուք կը տեսնէք նոյն նորութիւնը բոլոր շրթուներով վրա անդալի կերպով գործածվելիս: Այդպիսի գրողին կանուանեն՝ ազգային մարդ, ազգային վիպասան, ազգային բանաստեղծ: Այդ հանգամանքի վրա թեթեւ չը նայէք. դա մի բաղադրակ երևոյթ է, որի մեկնելը փոքր ինչ խորն է պահանջում: Իւրաքանչիւր բառը, կաղմկով լեզուի մի մասը, կրում է իր մէջ նաև նոյն լեզուի ազգային տարրերը: Բաւական չէ որ դուք մի բառ ստեղծէք, որը ինքուք մտքի և քերական ձևերին համեմատ ճիշդ է. կարծես ազգային հողին միայն քերական ձևերի մէջ լինի: Մի բառ ազգայնացնելու համար հարկաւոր է բացի դորանից նաև այն ձևը տալ նորան, որի հետ ազգային ճաշակը հաշտվել կարողանայ: Բառի երկարութիւնը, հնչումը, ներդաշնակութիւնը, միւս բառերի հետ կապվելու ընդունակու-

ների վերլուծեան համար: Երբ մտ կամ հեռու մի ազգական է մեռնում, յայնժամ տարիներով սեպղեաց լինելով, հրատարակում են ամենայն ուրախաբեր հանդեսներէրց և զուարճութիւններէրց: Այն հազարաւոր ազգայինք, որոնք սովից հարված անմահ հաս մեռանում են, միթէ նոցա համար չէ անհրաժեշտ ժամանակաւոր զրկանք... Այստեղ մի քանի խօսք չեմ կարողանում չառած՝ անցկենալ: Մշակո օրագրի շնորհիւ ազգը եւանդ ստացած, քանի տարի է սկսած հաստատուած է բարեգործական նպատակներով հիմնարկութիւններ, կազմում է ընկերութիւններ զանազան թէ քաղաքներում թէ գիւղերում: Մշակիո յորդորներով չը մնացին հայաբնակ տեղերի, որ առատ նուէրներով չը մխտարէին արարատեան հանրամասնութ ազգաշահ ընկերութեանը: Սակայն Մշակիո համաքաղաքացիութեանը, կանգնած լինելով պատուանդանում նորա, զգալիաբար մինչ օրս պատիւ են ունեցել ոչ ծանօթանալու և ոչ մասնակցելու այն ամենամարտաշահ ընկերութեան: Մինչ այն աստիճան խորին անտարբերութիւնը ոչ պակաս անարգանք է եւթարելի և ոչ թեթիւ յանդիմանութեան մեր օտարաբան դարացի ազգայիններէրց: Քաջայոյս պարտ ենք լինել, որ շուտով կը բառնան այն ամօթանքը իրանցից առատ նուէրներով նպաստամտոյց լինելով սովից և ընկերութեան:

Նիկողոս Նիկողոսեան

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

25 յունվարի

Նախորդ նամակովս յայտնեցի ձեզ քաղաքի վարչութեան ամսին 21-ին արած կարգադրութիւնը հացի մասին, այն կարգադրութեան մասին յայտնեցի ես իմ տարակուսանքը և այժմ շտապում եմ յայտնել, որ նոյն իսկ վարչութիւնը տեսնելով նոյն կարգադրութեան անիրազօրելի թիւնը նոյն թողցէ և ամսին 24-ին նոր կարգադրութիւն արաւ, որ է այս. — քաղաքիս աղքատների անունները ցուցակագրել և տալ տոնակ, որով իրաւունք ունենան որոշեալ հացարանից ստանալ ֆունտը 5 կօպէկով հաց՝ իսկ հա-

չ, այլ միայն նորա ծամերի վրա են խնդում, նոյնպէս և հայը այդ բառի վրա չի խնդայ, այլ միայն նորա պոչի վրա: Լեզուի մէջ արտասանութիւնը խաղում է առաջնակարգ դեր: Բայց յայտնի է, որ հայկական բառերը չնչոր իրանց վերջի վանկի վրա ունեն. ուրեմն հայը կասէ՝ ֆորմա: ի հարկէ, այժմ դուք կը սկսէք նորա վրա ծիծաղել: Կուղէք իմանալ, որ ֆորմա, տակաւ և այլ շատերը հայկական լեզուի հոգուն բնաւ հակառակ են: Վերջըք նոյն բառերի սեռականները՝ ֆորմայի, տակաւայի և փորձ փորձէք չնչոր դնել և բարձր ձայնով կարդալ՝ ֆորմայի, ֆորմայի, ֆորմայի...

Անհրաժեշտ է, որ ֆորմա, տակաւ և հազարաւոր ասաւանդը մեզ մտ ռսերէնք են մտել: Բայց ռուսը, երբ ֆրանսերէն *forme, taxe* իրան սեպհականացրեց, գիտէր որ մի աս պիտի աւելացնէր, որովհետև նորա լեզուն, ինչպէս յայտնի է, իզական սեռի հետ խիստ հաշտ հարեանութիւն պահպանել գիտէ:

Ուրեմն ոչ ֆորմա, տաքստ, այլ ֆորմ, տաքս: Այս մեկնութիւնից յետ, աւելորդ է անգամ երկարաբանել այն բառերի մասին, որոնք ոչ թէ միայն ա, այլ օհա—ով են վերջաւորուած (կասիտուլացիա, ասենիզացիա և այլն): Սոցա համար, գոնէ մեծ մասամբ, հարկաւոր է սեպհական, հասկանալի, բայց և քաղցր, որքան կարելի է կարճ և զեղեցիկ բառեր յօրինել—ասա հարցի միակ լուծումն:

Րուսները գնելու են այլ խանութներից՝ ֆունտը 6 կօպէկով: Ցուցակագրելու համար որոշված են 15 հայ և 10 թուրք իրաւասուններ. յոյս կայ որ 2 օրվայ ընթացքում կը ցուցակագրվեն բոլոր աղքատները:

Որովհետև հացթուփա թուրքերը միայն իրանց կրօնակիցներին են տալիս հաց՝ վճռից բանալ, 4 խանութ էլ հայերի համար, որպէս զի թուրք ու հայի մէջ կռիւներ չը պատահեն. կը ցանկացի որ առանց հետեւանքի չը մնար այս ուրուաւոր: Ուրեմն այսուհետև հայերն իրանց աղքատների համար կրօնենան առանձին հացարան՝ թուրք 4, իսկ թուրքերն իրանց համար նոյնպէս 4 հացարան. բայց թէ ինչ համեմատութիւնով պէտք է բաժանվի քաղաքային դամարով և կամ կամաւոր ստորագրված փողերով բերված աւելը թուրքերին ու հայերին, այդ չը գիտեմ դեռ ևս:

Ընդհանրապէս թանգ է նշանակված աղքատների համար ֆունտը 5 կօպէկը, հարուստներին հետ համեմատելով, որովհետև զանազանութիւնը մի կօպէկի մէջ է միայն. իմ կարծիքով լաւ կը լինէր որ 9 կօպէկ հարուստների համար լինէր՝ 3 կօպէկ աղքատների համար: Բայց կան այնպիսի աղքատներ ևս, որք 3 կօպէկով կան կարողանալու հաց գնել. արեւօր դոցա համար ո՞վ պիտի հոգայ—Քաղաքը տասնը մը արգունի ամբարից 1000 խալվար ցորեն և կարծվում էր թէ փոխարինաբար է տրված, որ նորից վերադարձնվի:

Բայց յայտնվեց, որ այդպէս չէ եղել, այլ գնվել է խալվարը 72 բութով:—Լսում ենք որ արգունի գանձարանից տրվելու է 35,000 բութով՝ Նախիջևանի, Որդուբաժի և Աղուլիս գաւառներին ի նպաստ. այն ինչ՝ յերանայ միւս գաւառներին համար տակաւին յայտնի ոչինչ չը կայ:

Մասնաւոր նամակից իմացանք որ այժմ քանդակաւոր կամաւորապէս ժողովել են 15,000 բութի և անգառնայի կերպով նուրբիլ նրանց. ցանկալի է որ նոյն օրինակին հետեւին և մեր հարուստները յօգուտ այն աղքատներին, որ իրզ աղքատ են—Արդէն երկու ամիս է որ 18—20 և 25 աստիճան ցորտեր են լինում. այսպիսի ցորտեր ոչ ոք չէ միշտ, որ տեսած լինի Նրեանում:

Բնական է որ հացի կարտ ու գրտերի ենթարկված խնձու ու ցորտ բնակարանների մէջ կացող աղքատ դասի մէջ անխուսափելի լինէին զանազան հիւանդութիւնները, բայց մինչև հիմայ մեր քաղաքացիքը չը կարողացան մի թիվին բժշկարան հիմնել, չքաղաք ու անձեռնահաս հիւանդներին օգնելու համար: Այդպիսի մի բժշկանոց հաղկ թէ քաղաքին ծանր պարտքի տակ ձգէր. մեր կարծիքով տարեկան 2000—2500 բութին շատ բաւական էր դեղերի, բնակարանի, վառելիքի և լուսաւորութեան մեծատապէս կարճ միջոցում արդէն մի որոշ դէմք ստացած և մինչև անգամ բաւականի կանոնաւորված: Այդ կարելի է վերաբերել որպէս կովկասեան հայերին, նոյնպէս և առակա-հայերին, նոցա կովկասեան սոքա Տաճկաստանում: Իսկ եթէ լեզուի այս երկու մեծ բարբառները մի յայտնի աստիճանի իրանցից թեքվում են, դրոյս պատճառը երկար քաջատրութիւնների կարտ է: Երկու թէ երեք տարի սորանից առաջ մենք արդէն ՁԵՂ-չակունում, երկարապէս յայտնել ենք մեր կարծիքը նոցա միացնելու մասին: Այն յողուածից մի միտք պատեղ կրկնելու արժանի է, որ նոցա միաւորութիւնը կարող է հաստատուել ոչ փոխադարձ յամաուրութեամբ, այլ ընդհակառակը հաստատութեամբ, մտքերի փոխարինութեամբ: Դա մի հասարակ պատեղում չէ, ուր մասնակցողներից միայն մէկը պիտի յաղթէ, իսկ միւսը անպատճառ յաղթվի, ինչպէս որ յատերը դուցէ կարծում են, այլ մի պոցոց են, որը վերջանում է միայն նորա-նով, ինչ մեղանում դրտովը են անուանում (aüsgleichen):—Մեր փոխադարձ հողեկան յարաբերութիւնները պիտի լինեն հիմք այդ պոցոցի համար: միայն այն ժամանակ մենք մի կը լինենք լեզուի, երբ մենք մեզ մի կը դզանք ազգով, այս բառի ամենամեղաբարձակ նշանակութեամբ:

Վերջ նկատեցիք, որ աշխարհիկ լեզուի անկատարելութիւնը միայն մերին չէ վերաբերելիս, այլ բոլոր լեզուներին, որոնք դեռ նոր են ոտը դետիւրը կոխում: Մինչև իտալերէնը, օրինակ, իսկպպէս գրական լեզու դառնար, պիտի դեռ դարբնով մարտնչէր, դեռ դարբնով իրան կրթէր: Ահա ինչպէս է նկարագրում մի ֆրանսիական գրական նագէտ այն աստիճանները, որոնց պիտի անցնէր յիշեալ լեզուն մինչ նա դառնար իսկպպէս գրական: Մենք այն կտորը առաջ ենք բերում, որովհետև նորա մէջ կան մի քանի կէտեր, որոնց միջոց այս գրուածքը ընթացքում արդէն չօչափել ենք, իսկ միւս կողմից օտարների հայեացքներից նաև հայ ընկերացողը կարող է իր սեփական լե-

համար. իսկ քաղաքիս բժիշկները կարող էին հերթերով ընդունել հիւանդներին ձրեպպէս կամ մի թեթեւ վարձով:—Ինչ և քաղաքային վարչութեան բացվելու հետ բացվեցան հասարակութեան առ-ջնութեան դռներն ևս, բայց և այնպէս մեծայոյս ենք, որ քաղաքային վարչութիւնը բաշտպէս գործ դնէ իր բոլոր միջոցները և չը թողնէ անօգնական աղքատներին ներկոյ չարեաց զօհ գնալու, մինչև որ անցնի չարիքը և զան հասնեն մեր երկրին յատուկ բարելի օրերը: Այժմ պէտք է երևցնեն մեր հարուստները իրանց առաքինութիւնը:

Սկիւնի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱՅՐԻՆ

Երևան, 29 դեկտ. 1879

1879-ի սեպտեմբերի 9-ին պ. Պապաշանեանցի հրատարակած բրտչիւրի ութերորդ երեսում երևանի հողերը դպրանոցում տեսչից մի ծեծված աշակերտի համար ի թիւս միւս ուսուցչաց ինձ ևս վկայ է կանչում: Մի և նոյն անցքի համար վկայ է կանչում և պ. Բէկնազարեանցը ՎՄՂԻԿԻ 222 համարում զիմ պատասխանը պ. Ղասախ Պապաշանեանցին լերևադրով յօղուածի մէջ: Առաջինը իմ վկայութեամբ հաստատում է այդ անցքը, իսկ վերջինը հերքում է իմ վկայութեամբ:

Պ. Պապաշանեանցը նոյն բրտչիւրի 5—6—7 երեսներում դժից ցած մեր անցեալ տարվայ—78-ի յունվարի 14-ին հողաբարձութեան ներկայացրած հրատարական է տպագրել, որի տակ ընթերցողը կը կարդայ հինգ ուսուցչների ստորագրութիւնները: Այդ հրատարականի համար պ. Բէկնազարեանցը, իրան պատասխանում հինգ ուսուցչների դէմ, այս անարարը եղակացութեան և հասնում հետեւալ Նախադասութիւններով:—... Վնչու նոյն առգէտ, զբարբարոս տեսչից չարաչար տանջված աշակերտները գրաւոր բողոք բարձրացնելով, զիտուն վարժապետների դէմ, չը կաշտովելով նրանց տաւալակած դրամական օժանդակութիւններից՝ պահանջելին իրանց տանջող տեսչին: Գեռ այս բաւական չէ՝ այս խօսքերն էլ վերջումն է կարկառու:—Վերջը բանիկ ևս կը հարցնէր, բայց ի պատիւ նոյն ուսուցչներին, այսօրքան էլ բաւական է: Իբր թէ այս մեծ զրպարտանքից դեռ ևս ինչպիսիով թողնում է և միւս տասնաւոր յանցանքները: Գրեցէք պարսկերէ, զԵՂ-ընցէք ինչքան կամենաք, բայց փոքր ինչ էլ ճշմարտութեան հետ բարեկամ եղէք... ինչ և եղան

այս խեղճ ուսուցչները: Հողաբարձու պ. Պապաշանեանցը մի կողմից, պ. Բէկնազարեանցը միւս կողմից, այս երկու անձնաւորութիւններին համար էլ ասպարէսը բաւականին ընդարձակ է, իսկ ուսուցչի համար շատ նեղ: Երևակայեցէք, ընթերցողք, ուսուցչի դրուութիւնը: Այս երկու իշխողներից որ մէկի սրտին զիպչի. մէկին գովել, միւսին պատարակել՝ այդ դժուար է և կամ ինչ կրաւուրով կարող եմ սրանց անձնականութեանը զիպչել, զա պարբերի բան կը լինի: Միայն ևս արդարութեան կողմն անցնելով ոչ մէկի կողմը մազաչափ անգամ հակվելով հրապարակա յայտնում եմ ստոյգը եղելով: Ներքին և ճշմարիտ համոզված եմ որ ոչ մէկին էլ չը պէտք է վերաբարձ, այլ ճիշտն այս է, որ ընթերցողներին ճշմարտութիւնը հողորդեմ: Ինչ անեցք, ուսուցչից եղանք, դերի եղանք... Ասացի իմ նպատակն այն չէ, որ երկուսի գործն էլ քննադատութեան ենթարկեմ, ոչ, միայն ևս հերքում եմ այն կէտերը, որ ինձ են մատնացոյց անում: Ուրեմն, նախ՝ պ. Պապաշանեանցը ի զուր է արել, որ իմ անունը խառնել է միւս ուսուցչների հետ իբրև վկայ այն ծեծված աշակերտի համար, որի ծեծվելուն ոչ սկանառես եմ եղել և ոչ իսկ լսել, իսկ ինչ որ վերաբերում է մեր տուած հրատարականին, որի մէջ բովանակում է ասաներիու յօղուած և որտեղ երրորդ ստորագրութիւնը իմն է, այդ իսկ իմ սեպհական համոզումներով եմ ստորագրել և ոչ մի ժամանակ չեմ կարող ուրանալ, որի դէմ արդար բողոքողներից միմն էլ ես էի: Երկրորդ, պ. Բէկնազարեանցը ի զուր է այդպէս կարծել և հրատարակելու էլ յայտնում, որ կաշտու է ենք աշակերտներին, թէև իրաւունք ունենք այդպէս կարծելու, սակայն չէ որ ընթերցողի առաջ միանգամայն ուսուցչի վարկը ու պատիւն է վարձը դրւմ, որի համար ընթերցողը անտարակոյս կարող է կարծել, որ այդպիսի խարդախ ուսուցչի-ներին չը պէտք է թոյլ տալ որ և է ուսումնաբանի դրան շիւթիցն անգամ ոտը կոխել, այն ինչ հարկաւոր մանուկներն են դաստիարակում նրանք:

78-ի ուսումնական տարվայ դեկտեմբերին մեր և տեսչի մէջ օրնեցած պարզ յարաբերութիւնները հետոհետէ պղտորելու առիթը մեր մանկավարժական ժողովները եղան, որին մի կանոնաւոր ընթացք տալու համար, խորհրդակցութեամբ որոշեցինք մի փոքրիկ համառօտ կանոնադրութիւն կազմել, որոշելով մեր և տեսչի իրաւունքներն ու պարտականութիւնները: Իրան ասել, մենք միշտ հաշտ աւելով էինք նպում պ. Բէկնազարեանցին և մեղանից խորացնչիւրս գնահատում էինք պարտի գործունէութիւնը և եռանդը: Թողնելով միւս բոլոր մանրամասնութիւնները՝ միայն այս կասեմ, որ մեր նպատակը և սուրբ որոշումը այդ ա-

(Գաւստէ, Պետրարքը և Բօկակալիօ) և հնութեան վերածնունդը հաստատում են իտալերէնի առաջնաւորութիւնը որը և տեսում է ամբողջ XV-րորդ դարվայ ընթացքում:

Բայց XVI-րորդ դարում կռիւր կրկնվում է հաւասար օյթերով: XVII-րորդ դարում ֆրանսերէնը սկսեց հետեւել իտալերէնին, յետոյ, նախանձութիւնից, սկսեց հեռանալ, իսկ XVIII-դարում նա արդէն սկսում է յարձակվել իտալերէնի վրա: իտալեան սիրում է իտալերէնը, որպէս զուարճութեան սիրտը, և նապում էր հիւսիսային լեզուների վրա, որպէս կարճից դուստրներ. նա հետևում է ճշմարտութիւնից, ասելով թէ իտալերէնը դատելու համար հարկաւոր է նրան լսել, իսկ Ֆրանսերէնը գնահատելու համար հարկաւոր է նրան իտալերով Վլօտերը, որը շատ դեր է դասում իտալիայի ընտանստեղծներին, մերժում է իտալական լեզուն իտալական ներդաշնակութիւնը, որ է՝ ըզոճակերպութիւնը (l'harmonie de la variété): Ի զուր էր չարարվում Բեռնինի Վլօտերի իտալական արտասանութիւնը ուղղել, սա մեղադրում էր այդ լեզուն միակերպ վերջաւորութիւններ ունենալու համար:

(L. Etienne, Histoire de la litterature italienne): Սորանով վերջացնեք մեր յօղուածը. հաւասար լինելով, որ մեզ գոնէ մասամբ աջողված կը լինի մեր աշխարհիկ լեզուի մի քանի դեռ մտքը հարցերի վրա փոքր ինչ լոյս տարածել:

ապրիլի 19-ին Երևանի քաղաքում Գրիգոր Բաբայանը իր անձնական գրքերը և փողերը մեծ զանգվածով կտրելով և քաղաքից դուրս գնալով, իր անձնական գրքերը և փողերը թողնելով Երևանի քաղաքում, որտեղ իր անձնական գրքերը և փողերը թողնելով, իր անձնական գրքերը և փողերը թողնելով...

Որովհետև ՎՄԱԿ-ի Երևանի քաղաքում առաջին անգամ յոթնամյա զբոսաշրջության մասին, մենք ստիպվեցանք այդ համարը հրատարակել կես թերթի մեծությամբ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Անցեալ տարի թէ հիշեալիս ժողովրդի և թէ նրա կառավարութեան ուշադրութիւնը զխառնարարէ երբ նշանաւոր հարցերով էր զբաղւած, այդ հարցերից առաջին տեղը բռնում էր յոյն-թուրքական սահմանագլխի վերաբերութեամբ թուրքաց կառավարութեան հետ ունեցած բանաձայնութիւնները, երկրորդ՝ 60 միլիոն դրամայի փոխառութիւնը, և երրորդ՝ նոր պատգամաւորների ընտրութիւնները, որովհետև հէնց այդ ձգտումով միջոցին էր, երբ արձակվեցաւ ազգային նախկին ժողովը:

Սահմանագլխի հարցը դժբաղդապէս մինչև այժմ էլ դեռ մնում է անվճար, և այժմ յոյները օրից օր աւելի ու աւելի են համոզուում, որ եթէ նրանց կառավարութիւնն ուշադրութիւն չը դարձնէր սենյակեան կարիքները ցնորակա խորհուրդներին, և չէզոք չը մնար 1877—1878-ի ուսումնական տարեկան արտադրութիւնը, այն ժամանակ նրանք, անշուշտ, չէին կորցնէին Երևանը և Քաղաքի թանկարժեք հողերը միջոցներով յոյսը բաց այժմ հաղիւ թէ նրանք համարձակվէին մտածել այդ մասին, թէ և յունական ժողովուրդը երբէք յոյսը չէ կտրոււմ, որ մի աւելի բաղաւոր օր նրան կը յաջողի նորից յետ ստանալ իր երեքմի նուաճված սիրելի նահանգները, որոնք կապված են նրա սրտի հետ պատմական այնքան նուիրական յիշատակներով, բայց մի և նոյն ժամանակ նա խորը կերպով համոզված է, որ այդ նրան, ցանկացածին չափ, շուտ չի յաջողի: Սահմանագլխի վերաբերութեամբ թուրք և յոյն զործակատարների մէջ շարունակվող բանագնացութիւնները մի տարուց աւել ձգձգվելուց յետոյ էլ դարձեալ ոչինչ որոշ եղբակացութեան չը հասան, և 1880 թւականը գտաւ այդ հարցը նոյն դրութեան մէջ ինչ դրութեան մէջ, որ նա գտնուում էր դեռ բանագնացութիւնների սկզբնուց առաջ: Թուրք զործակատարների զործի ձգձգելը և զխառնարար հարցից յաճախ շեղվելը կարողացան բաւականին կերպով համոզել հիշեալիս կառավարութեանը, որ Բ. Կուրը կամը չունի Բերլինի դաշնագրի համաձայն բաւականութիւն տալ այդ հարցին: Հաւանական է երևում, որ յունական կառավարութիւնը շուտով նորից կը դիմէ այն օտար պետութիւնների միջամտութեանը, որոնք ստորագրել են Բերլինի դաշնագիրը, և երևի միայն այդ միջամտութիւնը կը կարողանայ կտրել այն զորդեան հանգրուցը, որ եւրոպական դիպլոմատիան կրնայ Բերլինի վեհաժողովում:

Կառավարութիւնը չը կարողացաւ հաստատել 60,000,000 դրամայի փոխառութիւնը, որով նա կամեւում էր բարեօրէն երկրի Ֆինանսական դրութիւնը, և ոչնչացնել թուրք-թաղաքամբ գործածութիւնը. փոխառութեան հաստատուել ձեւը սաստիկ քննադատութեան ենթարկվեցաւ ազգային ժողովի մէջ, և պատգամաւորներից շատերը կառավարութեան այս գործը ժողովրդի համար սաստիկ վնասակար ձանաչեցին:

Ներկայ կարիքների և ընդդիմադրական կառավարութեան մէջ եղած երկարատե կրճատները վերջացան նրանով, որ պարլամենտ արձակվեցաւ, և սկսվեցան նոր ընտրութիւնները: Կեռ անցեալ տարի յունական կառավարութիւնը մի արտակարգ ժողով կազմեց,

որի մէջ պէտք է քննվէին մի քանի այնպիսի հարցեր, որոնց յետագիւրն անկարելի էր: Ժողովի մէջ տեղի ունեցած վիճարարութիւններն ու վերջիվերջ հարցերի աւելումը կառավարութեանը և իր անհանգիստութիւնը չէ համարում Կուրուրուրուրի կարիքները, այդ պատճառով էլ այն ժամանակվայ բոլոր միջնորդները միասին հրաժարական տուին: Այս դեպքից յետոյ, թաղաքը հրաւիրեց իր մօտ ընդդիմադրական կառավարութեան առաջնորդ Ջաֆարիին և Տրիկուպիին, և իր մանաւոր նրանցից, որ նրանք նոր կարիքներ չեն կազմել, մինչև որ թոյլտուութիւն չըստանան արձակել ազգային ժողովը, այն ժամանակ նա չընդունեց Կուրուրուրուրի հրաժարականը, բայց թոյլ տուեց նրան հարկաւոր դեպքում արձակել ազգային ժողովը, և նոր ընտրութիւններ կազմել: Յուլիսի 14-ին կայացած նիստի միջոցին, սաստիկ աղմուկի վիճարարութիւններից յետոյ, Կուրուրուրուրոյ յայտնեց ժողովին, որ թաղաքը արձակում է ժողովը: Յաջորդ աշնան ընտրութիւնների մէջ բազմութիւնը նոր կանդիդատներ կային, հոկտեմբերի 20-ին թաղաքը ինքն անձամբ բացեց նոր ժողովը՝ առաջին նիստը: Ժողովի նահագազ այս անգամ ընտրված էր պ. Սօտիրուրուրու: Ժողովի առաջին նիստից երկուսուց, որ ընդդիմադրական կառավարութիւնը մըտադիր է յարձակվել կառավարութեան վրա և հաշիւ պահանջել նրանից, թէ նա ինչ պատճառով արձակեց նախկին ժողովը, և թէ նա ինչպէս է վարվել երկրի հետ բոլոր այն ժամանակ, երբ նա կառավարում էր երկիրն առանց պարլամենտի: Այս բանին պատճառ տուցին այն վիճարարութիւնները, որոնք տեղի ունեցան դահլիճի ճանաչումը պատասխանելու համար կազմված մասնաժողովի մէջ, որի մէջ հարց էր յարուցանվում կառավարութեան արտաքին քաղաքագիտութեան վերաբերութեամբ: Միջնորդների նախագահ Կուրուրուրուրուրը պեռ ևս վիճարարութիւններից առաջ յայտնեց ժողովին, որ նրա վճիռը այս հարցին վերաբերութեամբ նա կը համարի որպէս գնահատութիւն միջնորդների թէ քաղաքականութեան և թէ նրանց գործելու եղանակին: Այս պատճառով վիճարարութիւնները ազգային ժողովում բոլորովին քաղաքական բնուորութիւն տուցան: Ընդդիմադրական կառավարութիւնը, Միջնորդի պատգամաւոր Տրիկուպիին առաջնորդութեամբ մեղադրում էր միջնորդութիւնը այն բանի մէջ, որ նա պետական գործերը կառավարում էր և այժմ ևս կառավարում է այնպէս, որ վնասում է երկիրն, և որ Կուրուրուրուրի կարիքների արտաքին քաղաքականութեան անկանոնութեան շնորհիւ, Երևանի ստորագրած է բոլոր աշխարհի աչքում: Կուրուրուրուրը թոյլ տալով բոլոր պատգամաւորներին յայտնել իրանց կարծիքները, պատասխանեց ընդդիմադրական կառավարութեան բոլոր յարձակմաններին դէմ, և պարզեցրեց ու բացատրեց իր միջնորդութեան գործելու եղանակը և քաղաքականութիւնը, այնպիսի ճարտարութեամբ կարողացաւ կառավարութեան պատուր պաշտպանել, որ ժողովը 99 ձայների բազմութեամբ 71-ի դէմ, ընդունեց այն պատասխանի նախագիծը, որ ուղղված էր իրեն պատասխան թաղաքորի ճանաչել, և քաղաքները Կուրուրուրուրի կարիքների բոլոր գործունեութիւնները:

Սահմանագլխի հարցը դժբաղդապէս մինչև այժմ էլ դեռ մնում է անվճար, և այժմ յոյները օրից օր աւելի ու աւելի են համոզուում, որ եթէ նրանց կառավարութիւնն ուշադրութիւն չը դարձնէր սենյակեան կարիքները ցնորակա խորհուրդներին, և չէզոք չը մնար 1877—1878-ի ուսումնական տարեկան արտադրութիւնը, այն ժամանակ նրանք, անշուշտ, չէին կորցնէին Երևանը և Քաղաքի թանկարժեք հողերը միջոցներով յոյսը բաց այժմ հաղիւ թէ նրանք համարձակվէին մտածել այդ մասին, թէ և յունական ժողովուրդը երբէք յոյսը չէ կտրոււմ, որ մի աւելի բաղաւոր օր նրան կը յաջողի նորից յետ ստանալ իր երեքմի նուաճված սիրելի նահանգները, որոնք կապված են նրա սրտի հետ պատմական այնքան նուիրական յիշատակներով, բայց մի և նոյն ժամանակ նա խորը կերպով համոզված է, որ այդ նրան, ցանկացածին չափ, շուտ չի յաջողի: Սահմանագլխի վերաբերութեամբ թուրք և յոյն զործակատարների մէջ շարունակվող բանագնացութիւնները մի տարուց աւել ձգձգվելուց յետոյ էլ դարձեալ ոչինչ որոշ եղբակացութեան չը հասան, և 1880 թւականը գտաւ այդ հարցը նոյն դրութեան մէջ ինչ դրութեան մէջ, որ նա գտնուում էր դեռ բանագնացութիւնների սկզբնուց առաջ: Թուրք զործակատարների զործի ձգձգելը և զխառնարար հարցից յաճախ շեղվելը կարողացան բաւականին կերպով համոզել հիշեալիս կառավարութեանը, որ Բ. Կուրը կամը չունի Բերլինի դաշնագրի համաձայն բաւականութիւն տալ այդ հարցին: Հաւանական է երևում, որ յունական կառավարութիւնը շուտով նորից կը դիմէ այն օտար պետութիւնների միջամտութեանը, որոնք ստորագրել են Բերլինի դաշնագիրը, և երևի միայն այդ միջամտութիւնը կը կարողանայ կտրել այն զորդեան հանգրուցը, որ եւրոպական դիպլոմատիան կրնայ Բերլինի վեհաժողովում:

Անցեալ տարվայ վերջին նիստերում պարլամենտը կարգադրեց և մի քանի գործեր, որոնցից մենք կը բաւականանք միայն մէկով, որ հասցած բոլորից ամենամեծանրակշիւն է. — դա, ինչպէս և ամենտեղ, դրամների, Ֆինանսների հարցին է: Պարլամենտը հաշիւեց 1880 թւականի համար նշանակված պետական բոլոր եկամուտները և ծախսերը, որոնցից երևում է, որ պետական եկամուտներից զայնուամ է 45,816,457 դրամայ, մինչդեռ նրա ծախսերը հաւասարվում են 56,068,792 դրամային, ուրիշ խօսքով ասած, ծախսերը եկամուտներից 10,252,335 դրամայով աւելի են. դէ՞ Ֆինանսի վերաբերութեամբ, կառավարութիւնը բացատրեց, որ 1880 թւի մի քանի հարկերի աւելացնելու պատճառով, նա յոյս ունի, որ դէ՞ Ֆինանսը 6,000,000 դրամայով կը նուազի. և այդ հարկի մեծագոյն մասը կառավարութիւնը դիտարորութիւն ունի ծխախոտի վրա դնելու, որից նա սպասում է 2,000,000 դրամայ:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿՈՒՅԻՑ

Վան, 5 յունվարի

Շատ տխուր լուրեր պէտք է հարդրեմ ձեզ այսօր: Վանի մէջ սովը հասել է այն կէտին, որ իւրաքանչիւր օր քաղաքի Այգեստան ասպած մասում մի քանի հատ դիակներ են գտնուում այն թըշուառ երեխաների և ծերերի, որոնք թափառում են գետնի միջից բոյսերի արմատներ հանելու և նրանց մէջ կերակուր գտնելու համար: Սովը այդպիսի տաժանութեան պատճառով ուստաց հիւպատոս կամարականի առաջնորդութեամբ կազմվել է Վանի մէջ մի մասնաժողով, որ ստանում է Ռուսաստանից եկած օգնութիւնը և ժողովրդին է բաժանում:

Թարգման դառնալով մասնաժողովի մարզերին, ինչպէս ենք ՎՄԱԿ-ի միջնորդութիւնը սովամահի առաջն առնելու համար: Չը նայելով որ Վանի երիտասարդութիւնը զօրեղ կերպով օգնում է և պրոպագանդա է սնում, բայց դարձեալ նա խիստ անգոր է պահելու ժողովուրդը ցիր ու ցան լինելուց, և թէ միայն յապաղեն ուսուսայրեր իրանց ձեռքը թշուառներին մտնելու:

Խրիմեան հայրկը արդէն Վանում է. նա ամեն օր եկեղեցու սեղանն է բարձրանում քարոզելու, բայց ժողովրդի աղաղակը լսելով ճանց, հայրիկ, հանց... նա թուլանում է սեղանի վրա և եկեղեցուց նրան ձեռքերի վրա են դուրս տանում:

Անգլիական հիւպատոսը շատ նամակներ է ուղարկում անգլիական լրագրողներին, նկարագրելով արտաքին պատկերներ խեղճ սովատանջ ժողովրդի դրութեանից և օգնութիւն է խնդրում անգլիական ժողովրդից, բայց ինչպէս երևում է, պատմական կերպով նրան ոչ ոք չէ խրախուսում, որովհետև թուրքաց հայրեր ցրվել և կոտորվել, հայոց ազգի կատարելապէս ոչնչանալը թէ Անգլիայի և թէ Թուրքիայի քաղաքականութեան համար ձեռնառու է:

ՄԵԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻՐԳ, 7 փետրվարի: Պետերբուրգի դիմադրական շրջանին, փետրվարի 6-ին տուած հրամանում ասված է: Յերէկ, երեկոյան ժամը 7-ին, Չմերային պալատի զվարար պահապանոցի տակ, դիմադրական շրջանաւոր քանակութեան վառվելուց առաջացաւ ճայթիւն: Ընտրելով Բարձրագոյն ճաշի ծառի ժամանակը և ուղղելով հարուածը կայսրի սեղանատուրը քանդելու, յանդուգն շարազորը, ակներկ կերպով, դորանով մերկացրեց իր դժոխային դիտարորութիւնը կայսրի անձնաւորութեան կեանքին ձեռնամուկ լինելու: Աստուած փրկեց իր Օձեայի թանգարան կեանքը, կրկին ցոյց տալով իր անպատմելի և մեծ ոգորութիւնը, որի համար շատապէս շնորհակալութիւն յայտնել ջերմեանը և միահատու աղօթքով: Ստորագրված է Գուրկո:

Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻՐԳ, 7 փետրվարի: Երէկ բոլոր եկեղեցիներում շնորհակալութեան մաղթանքներ են կատարվել:

Խմբագիր—հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Մամուլի տակից դուրս են եկել և վաճառվում են Կենտրոնական Գրավաճառանոցում հետևեալ գրքերը:

Table listing various books and their prices. Includes titles like 'Մանկական երգեր Գամառ-Բաթիկայի, կազմած...' and 'Քառամյակ մեզու պատկերազարդ, կազմած Թարգ. օր Ն. Տէր-Մարկոսեանի'.

Table listing books under the heading 'Հրատարակութիւն Չարմայր Մտերեանի'. Includes 'Փարոս Հայաստանի պատկերազարդ հանդէս'.

Table listing books under the heading 'Իշխան Բէհրութեանի Հրատարակութիւններ'. Includes 'Վոյքի իմ վեչեր, Ֆարս երեք պատկերով Մ. Տ. Գ.'.

Table listing books under the heading 'Ռուսաց Գրական Կատակ. կատակերգութիւն մէկ արարուածով'.

Նոյն տեղը վաճառվում են ամենայն տեսակի դասագրքեր Հայերէն, Ռուսերէն և օտար լեզուներէ, դասական պիտոյքներ ուսումնարաններէ և աշակերտներէ համար. Հայերէն, Ռուսերէն և Գաղղերէն վիպասանութիւններ, ամենայն հասակի ընթերցանութեան և գիտութեան զանազան ճիւղերին վերաբերեալ գրքեր. պատուէրները կատարվում են ամենայն արագութեամբ: Օտարաբարազարդ իրանց պահանջները պէտք է ուղարկեն հետևեալ հասցեով Вь Тяфлисѣ. Вь Центральную книжную торговлю

4—10



Կիրակի, յունվարի 27-ից սկսած, Գուշիբեան փողոցի վրա, ցիրկի մօտ գտնված բաղաձանի մէջ կը ներկայացնուի հասարակութեանը երբէք այստեղ չը տեսնված երկոյթ, այն է ԵՒՐՕՊԱՅԻ ԵՌՆ-ՋԻՆ ՀՍԿՅ ՕՐԻՈՐԳ ԱՄԱԼԻԱ և աշխարհի ամենափոքր կՆՐԼԻԿՆԵՐ ՄԱՐԿԻՑ ՀԵՆՐԻԽ ՎՕԼԳԻ և ՄԱՐԿԻՑՈՒՆԻ ԼՈՒԻՍԷ ՏԵՂԵՐԻ գները՝ առաջին տեղեր 50 կոպէկ, երկրորդ 30 կոպէկ: Երեխաները կէսն են վճարում:

4—5

Բժիշկ Բ. Նաւասարդեանի «Գիթտերիտ» կամ «փողացա» գրքոյը վաճառվում է հեղինակի մօտ քաղաքային հիւանդանոցում, Կենդրոնական գրավաճառանոցում և Օ. Գրիգորեանցի Կովկասեան գրավաճառանոցում: Գինն է 25 կոպէկ—բարեգործական նպատակով:

ԲԵՐԼԻՆԻ ակադեմիաի Ինժեներ Կ. Կ. Կել-լինգ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ է ամեն տեսակ ՊԱՆԵՆԻ և զանազան ՇԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ Է անձն առնում: Հասցէն Վարանցովկայա Նաբրեժնայա, № 4, ՎԵՐԻՆ ՑԱՐԿՈՒՄ:

ՄԻ ՕՐԻՈՐԳ ՎԱՐՃՈՒՆԻ, որ ուսուցչուհու Վ.ԿԱՅԱՎԱՆ ունի, ՆՈՐ է եկել ՓԱՐԻՋԻՑ և հիմնաւորապէս իմանում է ՌՈՒՍԵՐԷՆ, ՅԸՐԱՆՍԵՐԷՆ, ԳԵՐՄԱՆԵՐԷՆ, ԱՆԳԼԻԵՐԷՆ և ԻՏԱԼԵՐԷՆ լեզուները, նոյնպէս ԵՐԱԺՇՆՈՒԹԻՒՆ և ԵՐԿԵՑՈՒԹԻՒՆ փնտռու է ԳՕԱՍԵՐ կամ վարժուհու ՊԱՇՏՈՆ: Հասցէն. Ատամանկայա փողոց, ՋՈՒՐԱՎՈՎ ՏՈՒՆ, առաջին յարկում Սեմինարիայի հանդէպ, Բրոքսկու բնակարանում:

4—6

ՆԵՐԿԱՅ 1880 ԹԻՈՒՄ ԿԸ ՏՊԱԳՐՎԻ «ԿԱՅԾԵՐ» ՎԷՊ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻՑ Հեղինակու թիւն ՐԱՖՖԻ

Վէպը բաղկացած կը լինի երկու առանձին հատորներէ իւրաքանչիւրը կը բովանդակէ մօտաւորապէս 400 տպագրված երեսներ: Ըմեն մէկ հատորի գինն է 1 ռ. 50 կ., իսկ միասին 3 ռ.: Մէկ հատորի համար առանձին ստորագրութիւն չէ ընդունվում: Ստորագրվել կարելի է ԳՆԻՆՆԵՐՈՒՄ այն պարոններէ մօտ, որոնք բարեհաճել են բաժանորդներ հաւաքել «ԿԱՅԾԵՐ» տպագրութեան համար, իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ պէտք է դիմել «ՄԵՂԱԿԻ» խմբագրատանը Յ. ՄԵԼԻՔ-ՅԵՎՈՐԵԱՆԻՆ:

ՀԱՇՏԱՐԱՐ դատարանի 4 բաժնի դատաստանական ՊՐԻՍԱՎ ՎԱՍԻԼԵՆԿՕ քաղաքային օրէնսդրութեան 1030 յօդուածի համեմատ յայտնում է, որ ՓԵՏՐՎԱՐԻ 16-ին առաւօտեան 10 ժամին, Նրեանեան հրապարակի վրա, Քամահէվի քարվանսարայի մօտ, պօլիցիական վարչութեան հանդէպ ԱՃՈՒԳՈՎ ԿԸ ԾԱԽՎԻ ԱՅՐԻ ԷՓԵՄԻԱ ՄԱՅԻՍՈՒՐՕՎ Ի շարժական ԿԱՅՔԸ, որ բազկացած է զանազան կահ կարասիքից, պահարաններից, բուքէտից և այլն և որ գնահատված է 148 ռ.: ԱՅՐԻ ՄԱՅԻՍՈՒՐՕՎ Ի կայքը ծախվում է Ստեպան Պոմպուլովի 1880 թ. ՊԱՐՏԻ և 1876 թ. Սեպտեմբերի 14-ից սկսած պարտքի 80400Ր և դատաստանական ծախս 120 ռ. ՁԸ ՎՃԱՐՆԻՈՒ ՀԱՄԱՐ: 2—3

ՆՈՐ ՀՐԱՍԱՐԱՎՈՒԹԻՒՆՆԵՐ՝ 1. Երգն կեանց քահանայ—Մանկական երգարան, երգեր և պարերը ընդունված է Ներսիսեան և Գայանեան դպրոցներում: գինն է . . . — ռ. 20 կ. 2. Մեծատունեանց—Նրբարան աղջկանց և աշակերտուհեաց Հայկական ուսումնարանաց. . . 1 ռ. — կ. 3. Բժիշկ Բ. Նաւասարդեանց—Գիթտերիտ բողաղացաւ. . . — ռ. 25 կ. 4. Բժիշկ Գ. Տէր-Գրիգորեանց—Վարակից հիւանդութիւններ. (Մտղիկ, կարմրուկ, սկարլատին, բժաւոր փիֆ, անդադարձ տենդ, դիֆտերիտ, ընդհատ տենդ, խոլերայ, դեղին տենդ, որովայնափոփ և ժանտախտ.) Սոցա յատկութիւններն, ծագման և տարածման եղանակներն և նախապաշտպանողական միջոցներ:

Վաճառվում են Չ. Գրիգորեանցի Կովկասեան գրավաճառանոցում: 3—5

Մանուկ բարվանսարան այրվելուց յետ, նորից բացված է խտակ մով առևտուր Միոնեան փողոցում Երթուհու բարվանսարանում № 14. Իւրաքանչիւր շաբաթ ստացվում է նոր շինուած խտակ մամեր իմ սեփական զավթից և որոնք վաճառվում են էժան գներով. խնդրեմ գնողներին չը թողնել իրենց այցելութիւնները: Յովհաննէս Կործեան 1—4

ՆԻԿՈԼԱՅԵՆՍԿԻ ԱՐԳՈՒՆԱՎԱՆ ՌՈՒՍՅՈՒՍՏՈՒՄՆԵՐԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ հարկաւոր է ՎԱՐՉԵԼ չորս մեծ և չորս միջակ սենդալներ մեծ բակով, Հաւաքարում, աւելի ՊՕԿՐՕՎՍԿԻ ԿԱՅԱՐՄԻ մօտերում: Այգլիսի շինութիւն ունեցողներին խնդրում եմ շնորհ բերել յիշեալ ուսումնարանը, ՊՕԿՐՕՎՍԿԻ ԿԱՅԱՐՄԻ ԳԻՄՆԱՅ, և խօսակցել պայմանների մասին ուսումնարանի տեսչի հետ, ամենայն օր ճաշից յետոյ 3 ժամից մինչև 7 ժամը երեկոյեան: 2—3

ՄԻ ՀԱՅ ՕՐԻՈՐԳ, որ աւարտել է իւր ուսումն և ՊԵՏԵՐԲՈՐԳԻ օրիորդաց ԳԻՄՆԱՅԱՆՆԵՐԻՑ միջ մէջ, ցանկանում է վարժուհու պաշտօն ստանալ Կովկասի ՀԱՅՈՑ ՌՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐՈՒՄ: Պայմանները խնդրեմ ուղարկել հետևեալ հասցեի. С. Петербургъ, Новая улица, домъ № 14 кв. № 10 Хр. Ив. Иоану. 4—5

«ԻՇԽԱՆ ԻՎԱՆ ԿՈՆՍՏԱՆԾԻՆՕՎԻՉ ԲԱԳՐԱՏԻՈՆ ՄՈՒՐԱՎԱՍԿԻ և ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՆԵՐ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ յայտնում է, որ ՄՈՒՏԲԵՐԻ համար մինչև ՆՈՐ կարգադրութիւնը վճարում է. ՄԻՆՉԵԻ ՊԱՇԱՆՁԸ . . . 3% ԺԱՄԱՆԱԿԱՆ ՄՈՒՏԲԵՐ ՎԵՑ ԱՄՍՈՎ . . . 6% ՄԻ ՏԱՐՈՎ . . . 7% ԵՐԿՈՒ ՏԱՐՈՎ . . . 7 1/2% Բացի այդ 2-րդ կարգի մուտքերին ընկերական ապահովագրելով տարեկան 8% և աւելի: 2—3

ԹԻՖԼԻՍԻ ԲԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ ՌՈՒՍՅՈՒՍՏ ԲԱՅԱՐԻ և ՀԱՌԱՔԱՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԻ վրա կառուցված են ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՇԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ վարձով տալու համար. ուսաց բաղարի վրա 18 համարներ և Հաւաքարի հրապարակի վրա 40: Յիշեալ շինութիւնները ՎԱՐՉՈՎ վերցնել 8ԱՆԿԱՑՈՂՆԵՐԸ հրաւիրվում են քաղաքային վարչութիւնը, որի ԳՐԱՍԵՆԱԿՈՒՄ ամենայն օր, բացի տօն օրերից, առաւօտեան 10 մինչև 2 ժամը երեկոյեան վարձի ՊԱՅՄԱՆՆԵՐԸ կը յայտնվեն: 2—3

Չ. Գրիգորեանցի «Կովկասեան գրավաճառանոցում ծախվում են» 1. Գալիսիան. Ա.—բառգիրք Հայ-գաղղիարէն: Dictionnaire Armenien Francais. գինն է. . . 6 ռ. 2. Գալիսիան. Ա.—Հայկական դերագրութիւն, գինն է. . . 1 ռ. 3. Մեծատունեանց (Նիշեալ վարժապետ) —Նրբարան աղջկանց և աշակերտուհեաց Հայկական ուսումնարանաց: Հատ. ա. գինն է. . . 1 ռ. 2—3